ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
LINGUISTICS, LITERATURE STUDY
ЛИНГВИСТИКА, ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

ՔԱՂԱՔԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՄՈՏԻՎԸ ՀԵՆՐԻԿ ԷԴՈՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ*

ՀՏԴ 82-1:821.19

ՀՈՒՓՍԻՄԵ ԶԱՔԱՐՅԱՆ
ԵՊՀ հայ նորագույն գրականության ամբիոնի հայցորդ,
ք.Երևան, Հայաստանի Հանրապետություն
zagaryan_hripsime@mail.ru

Հոդվածում դիտարկվում է քաղաքի տարածական մոտիվը Հենրիկ Էդոյանի բանաստեղծական աշխարհում[469], որը մետաբանաստեղծական մակարդակում հանդես է գալիս ինքնատիպ պարադոքսալությամբ ու երկարժեքությամբ: Էդոյանի քնարերգության մոտիվային կոնտեքստում քաղաքի տարածական մոտիվը ներկայացված է բացառապես միմյանցից տարբերվող ձևերով: Քաղաքն այն տարածքն է, որտեղ խմորվում են բանաստեղծի յուրօրինակ գաղափարները, խոհերն ու ընկալումները մարդու և աշխարհի մասին: Այն բանաստեղծի քնարական աշխարհի սեմանտիկական կենտրոնն է:

Հոդվածի նպատակը գրականագիտական մտքի ժամանակակից տիրույթում Էդոյանի բանաստեղծական տեքստում հաճախ գործածված քաղաքային պատկերների գեղարվեստական արժեքի կարևորումն է:

Հոդվածը կառուցված է գրական-գեղարվեստական երկի հետազոտման վերլուծական ու տիպաբանական, ժամանակագրական-կենսագրական մեթոդների գործածմամբ, որի համար որպես սկզբնաղբյուր են ծառայել նշանավոր հեղինակներ Յ. Վ. Գյոթեի, Ա. Ն. Վեսելովսկու և այլ հեղինակների գիտական մտքերի՝ տրամաբանորեն հիմնավորված մեջբերումները:

Հոդվածի նորույթը պայմանավորված է մերօրյա ականավոր բանաստեղծ Հենրիկ Էդոյանի բանաստեղծական աշխարհում յուրովի գործածված քաղաքային պատկերների դիտարկման ու արժևորման երկկողմ հարցերի գիտական հետազոտությամբ:

Բանալի բառեր՝ *տարածական մոտիվ, քաղաք, բանաստեղծություն, բանաստեղծական «ես», լիրիկական «ես»[470], պոեզիա, իմաստ:*

Մոտիվը «ստեղծագործության որոշակի բովանդակությունից գեղարվեստորեն շեղվելու վերջին աստիճանն է, որն ամրագրվում է պարզագույն խոսքային բանաձևում»[471]: Որպես տերմին՝ այն առաջին անգամ առաջ է քաշել Գյոթեն «Էպիկական և դրամատիկական պոեզիայի մասին» հոդվածում: Մոտիվն, ըստ նրա,

---

* Հոդվածը ներկայացվել է 25.04.2019թ., գրախոսվել՝ 20.05.2019թ., տպագրության ընդունվել՝ 17.06.2019թ.:

[469] Քանի որ Հենրիկ Էդոյանի բանաստեղծական աշխարհում բավականաչափ տեղ զբաղեցնող քաղաքային պատկերների վերաբերյալ չկա գիտական ուսումնասիրություն, ուստի մեր կողմից կատարված ուսումնասիրությունում այլ հեղինակներից հղումները կլինեն սահմանափակ:

[470] **Гинзбург Л. Я**. О лирике, Л., изд. «Советский писатель», 1974, с. 155-*167*.

[471] Литературная энциклопедия терминов и понятий, Москва, “Интелвак”, 2001, с. 594.

սյուժետային տարր է, դինամիկ ու իրավիճակային միավոր[472], իսկ գրականության պատմաբան Ա.Ն.Վեսելովսկին «Պատմական պոետիկա» աշխատությունում գրում է. «Մոտիվ ասելով ես հասկանում եմ այն բանաձևը, որն առաջին հերթին պատասխանում է հասարակությանը հուզող այն հարցերին, որոնք բնությունն ամենուր դնում էր մարդկանց առջև, կամ ամրապնդում իրականության առանձնահատուկ վառ, կարևոր թվացող կամ կրկնվող տպավորությունները: Մոտիվի հայտանիշը նրա մեկ անդամից բաղկացած պատկերավոր սխեմատիզմն է. այդպիսին են ստորին միֆաբանության և հեքիաթի այլևս չմասնատվող տարրերը...»[473]:

Երևակայությունը մարդու բացառիկ ընդունակություններից բարձրագույնն է: Այն անմիջական կապ ունի մարդու մտքի ու կենսափորձի հետ և հեշտությամբ համադրվում է գեղարվեստական ստեղծագործությանը: Երբեք չսահմանափակվելով արտաքին աշխարհի ընկալման բնատուր հնարավորություններով՝ մարդը ստեղծում է սեփական ներքին աշխարհի կերպարը, որը կարող է լինել ինչպես տեսանելի, այնպես էլ վերացական: Այն մեր երևակայության խաղի ստեղծած ներքին տարածքն է և մշտապես բանաստեղծական է: Օբյեկտիվ իրականությունը բանաստեղծականացնելով՝ բանաստեղծը բանաստեղծական կերպարի միջոցով կարող է երևակայությամբ ընդլայնել առարկայորեն փոքրիկ տարածքը կամ ստեղծել հակառակը: Բանաստեղծը մշտապես կապվում է ինչ-որ հարազատ տարածքի հետ, որը դառնում է միֆաբանացման ու գեղարվեստական մարմնավորման առարկա:

Քաղաքը դեռևս Հոմերոսի ժամանակներից մշտապես գտնվել է մեծ մտածողների, գրողների ու պոետների ուշադրության կենտրոնում: Քաղաքային միջավայրի առաջին հետազոտողները Արիստոտելն ու Պլատոնն էին, իսկ ավելի ուշ նրա ուսումնասիրությամբ զբաղվել են Թոմաս Մյունցերը, Թոմաս Մորը, Թոմազո Կամպանելան:

Հենրիկ Էդոյանի բանաստեղծական աշխարհի ուսումնասիրությունը թույլ տվեց առանձնացնել ինքնատիպորեն մատուցված քաղաքի տարածական մոտիվը, որի բարձր արժեհամակարգը հարաբերվում է հեղինակի աշխարհայացքին ու աշխարհընկալմանը: Տարածական մոտիվ ասելով՝ նկատի ունենք տարբեր հեղինակների ստեղծագործություններում կրկնվող տարածական պատկերները, որոնք ամենատարբեր ստեղծագործութուններում արտահայտվում են ամենատարբեր իմաստներով:

Քաղաքի մոտիվը, ինչպես մյուս տարածական մոտիվները, Էդոյանի ստեղծագործական աշխարհում երբեմն դրսևորվում են մի շարք պարադոքսներով: Նրա բանաստեղծական տարածության հակադրությունները, կարելի է ասել, բազմաշերտ են: Բազմաստիճան պարադոքսալությունը, իմաստային բազմաբովանդակությունը, ռիթմը, մեղեդին հատվում են մի կետում, ապա՝ ճյուղավորվում՝ նախաիմաստի ներսում ստեղծելով նորերը, և վերածվում էդոյանական բանաստեղծական աշխարհին ներհատուկ հոգեբանական պատկերների, որոնք նրա ստեղծագործությանը հաղորդում են կոնտրաստային, ռիթմիկ, այդ իմաստով նույնպես իր տեսակի մեջ եզակի հնչեղություն: Հաշվի առնելով Էդոյանի բանաստեղծական աշխարհի այդ յուրահատկությունը՝ փորձենք դիտարկել քաղաքի մոտիվային պարադոքսալությունը:

Քաղաքին վերաբերող բանաստեղծությունների մի ամբողջ շարք ինքնատիպ էդոյանական մոտեցումներով քաղաքին հաղորդում են հեքիաթայնություն, կախարդանք: «Քաղաքներ» սոնետների շարքում քաղաքները «բոցեր են վառվող մթության մեջ գիշերների», որոնք աշխարհը դարձնում են «աստղով լեցուն մի երկինք»

[472] **Гете И.В.** Об эпической и драматической поэзии// Собрание сочинений: В 10 т., том 10, М., изд. «Художественная литература», 1980, с. 274-*277.*

[473] **Веселовский А. Н.** Историческая поэтика, Москва, изд. “Высшая школа”, 1989, с. 301.

այլ աշխարհից նայելիս, սակայն հեքիաթին փոխարինելու է գալիս իրականությունը. այստեղ՝ քաղաքում, «մեղքի առջև անհավասար», սակայն միևնույն քողի տակ թաքնված, իրար կողքի ապրում են «բանաստեղծներ, մարդասպաններ, գողեր, սրբեր», այստեղ «ամեն անցորդ անհաղորդ է քարի նման», քանզի պահապան հրեշտակը լքել է քաղաքը, այստեղ՝

Անպատասխան մարմինների երազներից
թույնն է հոսում և նավերն են ճոճվում դանդաղ
ջրերի մեջ, լքված իրենց նավազներից:
Ցավն ու մեղքը միասին են գալիս աշխարհ,
մտնում սենյակ անհատակ ու անառաստաղ
և դառնում են մի նոր կյանքի անկյունաքար:
«Քաղաքներ»[474]

Վերոբերյալ օրինակում թեև բացահայտվում են բանաստեղծական «ես»-ի՝ անտարբեր ու սառն իրականության հանդեպ տածած բացասական զգացմունքները, այնուամենայնիվ, քաղաքի ներդաշնակ տարածություն է պատկերվում, իսկ երգը՝ «վերջին ակնթարթը անդարձ կյանքի», որը, փողոցի մեջ ծնվելով, իմաստ է ստանում թղթերի վրա, դառնում է փրկության շնորհ: Էդոյանի լիրիկայում աստիճանաբար մարմնավորվում է գիշերային քաղաքը և դառնում նրա հոգու աշխարհի ներքին տարածությունը.

Քաղաքում չեն լսվում զանգերի ղողանջներ,
այլ միայն ազդանշաններ
և հրավառություններ: Գիշերն իր մեծությամբ
դժվար է տեղավորվում փողոցի
մարմնի մեջ, ուր մի օտարական
դեմքն է կնճռոտում իր գլխացավից: Մտնում եմ
սրճարան: Տեղ չկա նստելու:
«Տեղ չկա նստելու»[475]

Էդոյանն աշխարհն ընկալում ու արտացոլում է ոչ թե «սահյանական պեյզաժներով»[476], «հոգսերով ու ցավերով, մարդ-բնություն կապերով, տեսանելի ու անտեսանելի, արդար ու անարդար, չար ու բարի հարաբերություններով, անձնավորված քար ու քարափներով...»[477], այլ իր բանաստեղծական գծահամակարգում տեղ գտած այլաշխարհային օրենքներով, որոնք ամրագրված են սեփական հոգու նուրբ աշխարհում: Նրա սեփական բանաստեղծական աշխարհն արարված է շարժուն, վերերկրային, ապանյութականացած ու սեփական սահմաններին ձգտող աշխարհի օրենքներով: Էդոյանը խոսում է ոչ թե պարզապես աշխարհի, այլ սեփական ներաշխարհի տիեզերքի ներքին օրենքների մասին, ինչը նրան դուրս է բերում հասարակության ու աշխարհի փակագծերից այն կողմ.

Աղքատ քաղաքի մեջ պտտվում է մահը, աղքատ բառերի մեջ
ապրում է հարությունը: Ոչ թե խենթանոց, այլ
հիվանդանոց: Քաղաքի սառն ու օտար մի թաղամասում
ոտքդ ընկնում է ջրափոսի մեջ,
բայց միևնույն է՝ դու պիտի գնաս:

---

[474] **Էդոյան Հ.,** Ընտրանի, Ե, «Հայագիտակ», հրատ., 2016, էջ 370:
[475] Նույն տեղում, էջ 702:
[474] **Գրիգորյան Ս.** Համո Սահյան (դասախոսություն) // *http://ysu.am/files/Hamo_Sahyan_dasakhosutyun.pdf, 31. 05. 2019:*
[477] **Աղաբեկյան Կ.,** Համո Սահյանի և նրա պոեզիայի նվիրյալը//Աղաբեկյան Կ., Հոդվածներ, Ե., «ԵՊՀ հրատարակչություն», 2016, էջ 212:

«Քաղաքում կան վայրեր»[478]

Այսպիսով՝ մենք տեսնում ենք, որ Էդոյանի բանաստեղծական աշխարհում քաղաքը դառնում է հոգեբանական խաչուղի, որը ձեռք է բերում տարբեր իմաստներ: Մի կողմից քաղաքը արտացոլում է բանաստեղծական «ես»-ի ներաշխարհը, մյուս կողմից՝ ազդում բանաստեղծական «ես»-ի վրա, բայց առավել հաճախ Էդոյանի բանաստեղծական աշխարհում քաղաքը նույնանում է հոգու հետ:

Էդոյանը միշտ չէ, որ բանաստեղծության մեջ քաղաքային պատկերներին անդրադառնալիս հիշատակում է քաղաքի անվանումը. նա չի պատկերում որևէ կոնկրետ տարածք, քանի որ նրա համար քաղաքը կարևորվում է էական հատկանիշներով՝ առանց մանրամասնությունների: Բանաստեղծության մեջ կարող է նկարագրվել ինչ-որ պատկեր, որը բացառապես ընկալվում է որպես քաղաքային, ավելին՝ բանաստեղծը կարող է նշել քաղաքի այս կամ այն վայրը՝ չհիշատակելով քաղաքն ընդհանրապես.

Մետրո, կայարան «Երիտասարդական»:
Երիտասարդներ՝ կիսով չափ անէացած,
աղջիկներ՝ երազկոտ և
հաշվենկատ: Ես տեսնում եմ նրանց,
նրանք ինձ չեն տեսնում: Բարձրացող
և իջնող
շարժասանդուղքներ....:

«Մետրո, կայարան «Երիտասարդական» »[479]

Վերոբերյալ բանաստեղծության մեջ ևս քաղաքը անուղղակիորեն է ընկալվում. ուրբանիզմի գործառույթն այստեղ երկրորդական է: Բանաստեղծության իմաստով պայմանավորված՝ քաղաքը պոետական նոր ասելիքով ու բովանդակությամբ ստանում է նոր իմաստներ:

Էդոյանը պատկերավոր նկարագրությամբ միահյուսում է քաղաքային տարածությունը երկնային տարածությանը, ջնջում սահմանը երկնքի ու երկրի միջև: Նա նկատում է, որ

երկնքի ճամփաները
պսպղում են քաղաքի կամարների վրա-

և շարունակում.

կյանքը ինձ համար
հավերժի արձագանք է,
աստղերի գրաֆիկա, շենքերի արթնություն:

«Գիշերվա պողոտան»[480]

Բանաստեղծը, օրվա դինամիկան ընկալելով, դրոշմում է անհետացող պատկերները և արտապատկերում բանաստեղծական տեքստում.

Լապտերը լույս է տալիս
մի ծառի ճյուղերի մեջ ներքաշված
ինչպես երազ:

«Գիշերվա պողոտան»[481]

Քաղաքային տարածությունը իմաստավորվում է նաև ճարտարապետական անսամբլների՝ շենքերի ու փողոցների շնորհիվ: Փողոցը ձգվելով ընդլայնում է սահմանները և դառնում քնարական «ես»-ի համար ճակատագիր՝

«...Ճակատագիրն եմ ես քո»,-դեմքիս ուղիղ նայելով՝

---

[478] Նույն տեղում, էջ 703:
[479] **Էդոյան Հ.,** Լույսը ձախ կողմից, Ե., «Զանգակ» հրատ., 2018, էջ 94:
[480] **Էդոյան Հ.,** Ընտրանի, Ե., «Հայագիտակ» հրատ., 2016, էջ 364:
[481] Նույն տեղում:

ասում է նա և ժպտում միրաժի մեջ քաղաքի:

...Խոսում է նա և քայլում-հագին քարեր ու բետոն,
գալիս է իմ ետևից, ինձ հեռանալ չի թողնում,
և կեսօրն է մեր միջև զնգում ինչպես կամերտոն:
«Փողոցը»[482]

Ինչպես տեսնում ենք, քաղաքը օժտված է և՛ արտաքին, և՛ ներքին դինամիկայով:

Անդրադառնալով քաղաքի քաղաքակրթությանն ու պատկերելով նրա կենսընթացը՝ Էդոյանը բացահայտում է մարդկային կամքի ու մատերիայի պայքարի անվերջանալի հարցը: Նա ցույց է տալիս, թե որքան են մարդիկ կախված իրենց իսկ ստեղծած նյութական աշխարհից.

Համացանցից իմացավ, որ գարուն է,
նայեց ապակե թվատախտակին՝ ժամը
տասնմեկն էր, կարդաց՝ որ քաղցած է...
«Համացանցի առջև»[483]

«Ցերեկային խոսքեր» բանաստեղծության մեջ, օգտագործելով հարուստ ու զանազան փոխաբերություններ, քաղաքի մի փոքրիկ տարածական միավորի՝ ռեստորանի առօրեական ֆոնի վրա Էդոյանը նկարագրում է նյութական աշխարհում ապրող, նյութական աշխարհից կախված մարդուն, որ դեռևս խոնարհվում է իր սրտի ու հոգու առջև.

Ռեստորանների փայլուն ու գույնզգույն ապակիներից այն կողմ
մատուցողները նման են դաշտային ծաղիկների
քամուց շարժվող դեղին թերթիկներով,
ո՞վ է ապրում այս ողորկ ապակիների մեջ,
ո՞վ է աստվածներից ներքև ուղարկում
այսքան խենթություն-բոցավառելով
մեր կյանքի խարույկը մեր մատների մեջ
իբրև մատանի, որ տանում է մեզ
դեպի հարսանիք բախտի օղակներով...
«Ցերեկային խոսքեր»[484]

«Ցերեկային խոսքեր» բանաստեղծությունն հատկանշվում է իր արդիականությամբ: Կենցաղի ու գոյության կապը այս մետաբանաստեղծական ստեղծագործության ստատիկայի ու դինամիկայի հետ ստեղծում է մի կոմպոզիցիա, որը խոսում է բանաստեղծի տարերային ու շարժուն էության մասին:

Էդոյանի բանաստեղծական շարքերում լեյտմոտիվային բնույթ ունեցող քաղաքը պատկերվում է երկիմաստորեն, բայց ընթերցելիս նկատելի են դառնում վերացականն ու կոնկրետը. վերացական շղարշի տակ քողարկված է իրական պատկերը:

«Վերադարձ դեպի առաջ» բանաստեղծության մեջ քաղաքային պատկերի մոտիվային առանձնահատկությամբ բացահայտվում են բանաստեղծական սուբյեկտի ներաշխարհի խորքային, արքետիպական մակարդակները: Քաղաքի պոետիկան կապված է անձի ներքին լինելիության խնդրի հետ: Բանաստեղծի երևակայության խաղը ստեղծում է նոր իրողություն, որը երկակի է. մի կողմից՝ քաղաքն ապրում է նրա մեջ, և նրա հոգին պահպանում է հիշողություններ, մյուս կողմից՝ նա ապրում է քաղաքում և երևակայությամբ իր հոգում կառուցում հարազատ քաղաքի պատկերը: Հոգում կառուցած քաղաքն այն վայրն է, որտեղ բանաստեղծն ապրում է

[482] Նույն տեղում, էջ 149:
[483] Նույն տեղում, էջ 746:
[484] Նույն տեղում, էջ 88:

երազանքներով: Այն մի վայր է, որտեղ նա երազում է ապրել. իսկ անցյալը գտնվում է մի այլ աշխարհում, այսինքն՝ տարածությունն ու ժամանակը համակված են անիրականությամբ.

Ես վերադառնում եմ դեպի օրն իմ նախկին,
ես վերադառնում եմ բակն իմ ստվերախիտ,
ես վերադառնում եմ փողոցն այն, ուր մի օր
տաք հողը վառում էր իմ ոտքերը բոբիկ...

«Վերադարձ դեպի առաջ»[485]:

Բանաստեղծության մեջ պատկերվող քաղաքը դառնում է մանկությունը խորհրդանշող երանելի տարածություն: Եվ քանի որ մանկության հիշողությունը ավելին է, քան իրականությունը, այն միշտ կենդանի է ու անմահ. այդ երանելի տարածությունը դառնում է յուրաքանչյուրիս հոգևոր կացարանը՝ մի յուրատեսակ հոգևոր թանգարան, որտեղ մենք պահում ենք ամբողջությամբ մեզ պատկանող պատկերները՝ թանկագին ու սրբազան կյանքի պատկերները: Հետևաբար այդ տարածությունը մեր հոգու մեկուսացման ու ներանձնացման վայրն է: Երևակայությունների, երազանքների, տեսիլքների ու հիշողությունների այս կոմպոզիցիան ստեղծում է պատկերներ, որոնք բացահայտում են մարդու ներաշխարհը նրա ամենաբարձր արժեքներում:

...կյանք առանց լռության,
լռություն առանց ուժի,
կինոֆիլմ կադրից դուրս,
պտտվող մի սյուժե-
դեպի ետ, դեպի սկիզբ,
ուր մի երեխա
փնտրում է ճանապարհը
դեպի Սուրբ Քաղաք:

«Օր առանց հանդերձանքի»[486]

Էդոյանի քնարական աշխարհում քաղաքի պատկերը ներկայացվում է որպես անցյալը, ներկան ու ապագան կապող հանգույց ու երբեմն ներկայանում է սուրբ իմաստով: Նրա տարածաժամանակային պոեզիայում ժամանակը ձևավորում է միֆաբանաստեղծական քրոնոտոպ՝ այդ մոդելին բնորոշ հայտանիշներով ու կառուցվածքով:

Բանաստեղծն իր բնույթով արարիչ է. այն ամենը, ինչ նա արարում է, սեփական մտքի, ներաշխարհի և հոգու արձագանքն է: Էդոյանի լիրիկան, որն իր մեջ ամփոփում է բանաստեղծի բազմաբնույթ ու խորաթափանց բանաստեղծական «ես»-ը, հնարավորություն է ընձեռում զգալու ու տեսնելու քաղաքի բազմաբնույթ կերպարները, որոնք առանցքային դերակատարում ունեն նրա պոեզիայում: Քաղաքի մոտիվն առանձնանում է ինչպես արքետիպական հարուստ սեմանտիկայով, այնպես էլ տարածական մոտիվի առանձնահատուկ բնութագրերով, որոնք դրված են պատկերի կառուցվածքի հիմքում: Քաղաքը Էդոյանի քնարական աշխարհի գեղարվեստական այն տարածքն է, որը դառնում է նրա լիրիկայի իմաստաբանական կենտրոնը: Այն բանաստեղծի փոքր աշխարհն է, հոգու միկրոտիեզերքը, որը ձևով նման է մակրոտիեզերքին: Այդ երկու աշխարհների ներդաշնակվածությամբ է պայմանավորված էդոյանական քաղաքի մոտիվը:

Այսպիսով՝ Էդոյանի բանաստեղծական աշխարհում քաղաքի տարածական մոտիվը դառնում է գերշխող, իմաստաբանական գործառույթները՝ բազմաբովանդակ: Մեր կողմից դիտարկվող մոտիվը բանաստեղծական մակարդակում գործածվում է յուրահատուկ պարադոքսալությամբ ու երկարժեքությամբ:

[485] Նույն տեղում, էջ 268:
[486] Նույն տեղում, էջ 674:

THE CITY'S SPATIAL MOTIFIN HENRIK EDOYAN'S POETRY

HRIPSIME ZAKARYAN
Yerevan State University, Ph.D. student of the Department of Armenian Literature at the Faculty of Armenian Philology, Yerevan, Republic of Armenia

The article considers the city's spatial motif in the poetical world of Henrik Edoyan, which figures with paradoxicality and dual-values at metapoetical level. In the motivational context of Henrik Edoyan's lyrics, the spatial motif of the city is presented exclusively in the ways differing from each other. The city is the area where the poet's original ideas, thoughts and perceptions about the humans and the world are fermented. It is the semantic center of the poet's lyrical world.

The purpose of the article is to highlight the artistic essence of urban images commonly used in the poetic text of Henrik Edoyan in the context of modern literary thought.

The article is built using the analytical and typographic, chronological-biographical research methods of literary-artistic work for which the logically well-grounded citations of scientific ideas by prominent authors Y. V. Goethe, A. N. Veselovski and others have served as an original source.

The novelty of the article is conditioned by the scientific research on two-sided issues of observation and evaluation of urban images uniquely used in the poetical world of today's *prominent poet Henrik Edoyan.*

Key words: *spatial motif, city, poem, poetic "I", lyric "I", poetry, meaning.*

ПРОСТРАНСТВЕННЫЙ МОТИВ ГОРОДА В ПОЭЗИИ ГЕНРИХА ЭДОЯНА

РИПСИМЕ ЗАКАРЯН
Соискатель кафедры новейшей армянской литературы ЕГУ, г.Ереван, Республика Армения

В статье рассматривается пространственный мотив в поэтическом мире Генриха Эдояна, который выступает на мета-поэтическом уровне со своеобразной парадоксальностью и дуализмом. В мотивном контексте лирики Генриха Эдояна пространственный мотив города представлен формами, исключительно отличающимися друг от друга. Город – это та территория, где создаются оригинальные идеи и мысли автора о человеке и о мире. Он является семантическим центром лирического мира автора.

Цель статьи – подчеркнуть художественную ценность городских картин, которые были часто использованы в поэтических текстах Генриха Эдояна в рамках современных требований литературоведения.

Статья построена на основе аналитического и типологического, хронологоческо-биографического методов исследования литературно-художественного произведения, источником для которых послужили научно обоснованные цитаты из произведений таких великих авторов, как И. В. Гете, А. Н. Веселовский и другие.

Новизна статьи заключается в научном исследовании и оценке своеобразно использованных городских картин в поэтическом мире современного видного поэта Генриха Эдояна.

Ключевые слова: *пространственный мотив, город, стихотворение, поэтическое "Я", лирическое «Я», поэзия, смысл.*